



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 հունիս, 2019 թվականի № 27-Լ

«ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Իրականացնելով «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) բաժնետերերի ընդհանուր ժողովի լիազորությունները, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 11-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 14-ի N 752 որոշման Հավելված N 1-ով հաստատված կարգի 25-րդ կետի 1-ին ենթակետի պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի տեղակալի 2019 թվականի հունիսի 25-ի թիվ 02/14.21/4413-19 գրությունը՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը **ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել Ընկերության լուծարման հանձնաժողովի կողմից ներկայացված Ընկերության լուծարման հաշվեկշիռը 2019 թվականի հունիսի 24-ի դրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

27 հունիս, 2019 թվականի

ք. Երևան